ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ԻՍ՝ Վարդապետ Սուրբատեանց յառաջաբան։ Ի խոսք Ս. Յակոբեանց, տպագրեալ արդեամբք Սահատեսի Կարապետ Աղայի Սուրբատեան Կարնեցւոյ ի յիշատակ հոգւոյ նորին և յօգուտ ժառանգաւորաց վարժարանի Ս. Յակոբեանց։ Այն պատմութիւնը տպուած է մաքուր թղթի վրայ, 320 երեսէ բաղկացեալ և գինն է 7 ղրշ։ Կը պարունակէ Նոր Կտակարանի պատմութիւնը, խնամով և դասակարգութեամբ բաղդատեալ ի չորից Աւետարանչաց և ի Գործոց առաքելոց, բարոյական յորդորակներով հանդերձ, որուն վրայ աւելի ընդարձակ տեղեկութիւն տալու համար՝ արժան կը համարինք տպագրել այս տեղ իւր յառաջաբանը։

Մեր տգիտին դպրոցները շատ և շատ թերութիւններ ունին։ Թէ դասատուութեան եղանակին նկատմամբ և թէ ուսանելեաց ընտրութեան։ Մեծ առաւելութիւն և առաջնութիւն կը տրուի երկրորդական ուսանելիքներուն։ և ընդհակառակն, առանց կարեւոր մատդրութեան կը թողուին այն ուսմունքները, որոնք առաջին տեղը պիտի դրաւեին դասախօսութեան մէջ։ Այն մարդիկը, որոնք լրջութեան խորհած են դաստիարակութեան վրայ, քաջ կը գիտեն թէ որչափ վնասակար է այս խառնաշփոթութիւնը։

Քրիստոնէական Կրօնի ուսումն, որ իւր բարոյական վեհ և պարզ սկզբունքներով դպրոցական և ընկերական կեանքս հաւասարապէս ամենէ. կամ խապտ չը կայ մեր դպրոցներուն մէջ, և կամ ստուերը միայն կայ։ Ո՞ գիտէ, թէ այս չէ գլխաւոր պատճառն, որ դպրոցական գեղեցիկ յարկը պատժարան մի եղած է շատ տեղ թէ ուսուցչաց համար և թէ ուսանողաց։ Ըստ կայ դպրոցական գիտութեանի անդամոց մէջ փոխադարձ սիրոյ և վստահութեան այն սուրբ և խորհրդաւոր կապը, որ կը քաջալերացնէ ուսուցչի աշխատանքը և կը բերէ ուրեմն աշակերտի եռանդն ու ջանքը։ Ըստ կայ Ճշմարտասիրութեան և արդարասիրութեան այն մշտաբորբոք հուրը, որ մանկական հասակէն կը վառէ աշակերտի միտքն ու սիրտը՝ արիարար պատերազմիլ ամէն մոլորութեան և անիրաւութեան դէմ։ Ըստ կայ, վերջապէս աստուածասիրութեան և մարդասիրութեան այն հեզահամբոյր հոգին, զոր միայն Քրիստոնէական Կրօնի Ճշմարիտ ուսումը կարող է ներշնչանել ուսանողին մէջ, և ոչ որ ևիցէ արտաքին գիտութիւն կամ հմտութիւն։

Արդ՝ կրթութեան և դաստիարակութեան տարբերութիւնը առաւօրէն քաղելու և վայելելու համար՝ անհրաժեշտ հարկ է եկեղեցական գիտութեանց առաջին տեղը Կրօնի ուսմանն ընծայել, նոր սկսանիլ, շարունակել և աւարտել մարդոյ բոլանդակ դաստիարակութիւնը։ Բայց այն վեհ նպատակին հասնելու համար՝ բաւական չէ, իբրեւ դեղ, կաթիլ կաթիլ և եթ տրրուցանել Կրօնի ուսումը, այլ պէտք Ս. Գրոց կենդանի աղբիւրին մտուցցնել մանուկները, և այս եղանակաւ զովացնել նոցա բարոյական ծարաւը։ Պէտք է քաղուածել Ս. Գրքէն այն ամէն Ճշմարտութիւնները, որոնք մանկանց հասողութենէն և կարողութենէն վեր չեն, և որոնք անհրաժեշտ են նոցա բարոյական և բարոյական կենաց զարդացման համար։

Այս է Քրիստոնէական Կրօնի հմտութիւնը։ Ցորձառու ուսուցչաց հասուն խորհուրդը։ և այն իսկ նպատակաւ յօրինուած է ներկայ Երկասիրութիւնը, որուն մէջ պատմական ձեւով ամփոփուած են Նոր Կտակարանի աստուածաշունչ Ճշմարտութիւնները, հանդերձ պարզ և դիւրմոց յորդորակներով։

Թէեւ Նոր Կտակարանի պատմութեան քանի մի տեսակ հրատարակութիւններ կան, բայց մենք մասնաւորապէս հետեւած ենք 1862ին Թիֆլիզի մէջ տեղական բարբառով հրատարակուած Դասագրքին, որ ունի այսպիսի վերնագիր —Սրբազան Պատմութիւն Հայ ազգայոց Լուսաւորչեանց համար։ տլիսոր։ Պ. Ս.—։ Եւ տեսնելով այն առթիւ պարտք կը համարինք մատուցանել Աշխատասիրողին մեր շնորհակալութիւնը։ վասն զի լինելով, որ մեր Մեծարգոյ Բարեկամն, իւր Դասագրքի երկրորդ տպագրութեան ժամանակ, առանց նկատողութեան չը թողուր մեր սոյն հրատարակութեան մէջ գտնուած Ճշտութիւնները և յաւելուածները։

Ներկայ երկասիրութիւնը, տարբերութեամբ մեր ուսուցչութեան ժամանակ։ Քրիստոնէական Կրօնի գաղտնի հրահանգ եղած է մեր ձեռքը։ որոյ գաստատութեան համար մեր ընտրած ուսուցման միակ եղանակն է եղած՝ նախ ընդարձակօրէն բացատրելով պատմել, և ապա պահանջել աշակերտներէն։ որ մատդրութեամբ կարդան։ պատրաստեն, և ինքեանք եւս բանիւ բերանոյ պատմեն։ իսկ մարդոյ Դասագիրքը աւարտելէն ետքի՝ աւետարանական խնամատանութեան վրայ համառօտ շարադրածներ գրել տալով տրբագրած ենք։ ըստ ի ձայնի կարդալով։ թէ ինչ դժուարութիւններ տեսած ենք այս եղանակին մէջ կը թողունք որ իւրաքանչիւր դաստատու ինքնին փորձէ։ տեսնէ և վկայէ։

Քաղաքը յոյս մի կը քաջալերէ և կը մխիթարէ զմեզ։ որ այն աւետարանական Պատմութիւնը։ գրոցական Դասագիրքը լինելով հանդերձ։ կարող է նա և բարեպաշտ Դերդաստաններու մէջ ընթերցանութեան շահաւէտ գիրք լինիլ։ Երանի՞ թէ պատկուէր մեր այս յոյսը։ և այնուհետեւ առաւել քան գաւրին վարձատրուած կը համարէինք զմեզ մեր սոյն ամենագոյն աշխատանաց համար։

digitised by A.R.A.R.@